

րենալ բաժնեկու համար իրենց զինուորներուն: Պաղտատի խալիֆաներուն ճոխասիրութեան ժառանգ եղան Գահիրէի Ֆաթմայեան խալիֆաները, որոնցմէ էլ Մուլթաղիւ Ապու թէմին Մասա (1036-1094), 1067ի Գահիրէի ահուլի սուլէն վերջ ստիպուեցաւ ծախել իր զեղարուեստական մեծահամբաւ հաւաքածոն, անգին զմրուխտներ եւ ուրիշ գոհարեղէններ, եւ մասնաւորապէս չորս հազար հակ գորգ եւ կապերտ: Այս առասպելական հաւաքածոն ա'լ աւելի անհաւանական պիտի թուի՝ եթէ նկատի առնենք որ Dr. F. R. Martinի կարծիքով հակերէն իւրաքանչիւրը կը պարունակէր քանի մը հարիւր գորգ կամ կապերտ, ոսկիով, արծաթով եւ մետաքսով խիստ նրբօրէն հիւսուած, որոնցմէ մէկուն արժէքը միայն ամերիկեան ոսկեդրամով 300,000 տոլարէն աւելի էր: Անտարակոյս ասոնք մեծ մասով տեղական արտադրութիւններ չէին, այլ՝ գլխաւորաբար խալիֆայութեան ենթակայ գորգ շինող երկիրներէ ներածուած, որոնցմէ Հայաստան գլխաւոր արտադրողներէն մէկն էր:

Իսն Պաթուլթա (1325-1354) Արաբ աշխարհագիր-ուղեգիրը կը վկայէ որ Պիրճի մէջ Սուլթանին ներկայանալու կը հրաւիրուի: Ընդունելութեան սրահը նկարագրելով կ'ըսէ. «սրահին շուրջ գորգերով ծածկուած դախտեր կային, որոնցմէ մէկուն վրայ էր Սուլթանին բարձր: Երբ մենք այս վայրը ժամանեցինք, Սուլթանը իր բարձր վերջներով՝ ցածը մեր մօտ գորգերուն վրայ նստաւ»⁽⁷⁾: Սուլթանները կամ թաղաւորները ունէին իրենց պատուոյ, պաշտօնական գորգերը ու իրենց բարձերը, որոնց կու տային թիկունքին՝ ընդունելութեան պաշտօնական կամ անպաշտօն արարողութեանց ժամանակ: Իսն Պաթուլթայի այս վկայութիւնը կը հաստատէ նաեւ Ահմէտ Արապչահ Դամասկոսցին՝ իր թիմուրլէնիկ նկարագրութեան մէջ, ուր նկարագրելով Իսն խալտունի ընդունուիլը թիմուրլէն, կը գրէ. «յետոյ անոնք վերցուցին ճառախօսութեան գորգը եւ բացին խնձոքի գորգը» շարունակելով նկարագրել ճաշը⁽⁸⁾: Դարձեալ Արապչահ այլուր իր այդ գործին մէջ կը յիշէ որ թիմուրլ իր արքունեաց մէջ «վերցուց հրամանի եւ արգիլման գորգը ու սիւնեց զինոյ եւ երաժշտութեան գորգը»⁽⁹⁾: Այս ժամանակներէն քիչ վերջ, 1430ին, Տիգրանակերտի Ագ-Գոյունլու Շահ Օթման Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը շատ սիրելուն «ի վերայ իւրոյ թաղաւորական խալիչային (գորգին) նստուցանէր»: Իսկ Josefa Barbaro Վենետիկցին, երբ իբր զեսպան (1471-1478) Թաւրիզի մէջ Ուզուն Հասանի կը ներկայանայ, կը տեսնէ որ անոր «տաղաւարին ամբողջ յատակը գորգեր փռուած էին»: Իսկ զար մը վերջ՝ A. G. Busbequius երբ իբր զեսպան Սուլթան Սիւլէյման Ա. Գանուլի (1520-1566) կ'այցելէ (1554-1559) Ամասիոյ մէջ, կը նկատէ որ «Ան նստած էր ցած

(7) Selection from the travels... Trans. by H. A. R. Gibb, 1929, p. 133.

(8) Tamerlane... Trans. J. H. Sanders, London, 1937, p. 144: «Տես հայ. թարգ. Երուսաղէմ, 1873, էջ 135, որ շատ ազատաւ է եւ գորգերու մասին չի յիշեր:

(9) Անդ, էջ 188: